

**Դավիթ Չոչիշվիլի**

*Պատմական գիտությունների դոկտոր,  
գործի պետական ուսումնական համալսարանի պրոֆեսոր,  
երկրագույն կրթության վարժող*

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ԵՐԿԼԵԶՈՒ  
ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ**

**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

Երկրագույն կրթությունը ժամանակակից աշխարհի բազմաթիվ երկրներում փորձարկված մեթոդ է, որը կիրառվում է արդյունավետորեն: Վրաստանում երկրագույն ուսուցումը սկսվել է 2004 թվականից, երբ «Միմերա» միջազգային կազմակերպության օժանդակությամբ այն ներդրվեց ոչ վրացալեզու բնակչությամբ հոծ բնակեցված մի քանի շրջանների չորս դպրոցներում:

Մեր իրականության մեջ երկրագույն ուսուցումը դպրոցի վարչությունից պահանջում է նրանից ավելի պատասխանատվություն, քան սովորական միավելու դպրոցի վարչությունից է պահանջվում, քանի որ երկրագույն ուսուցման ներդրման և վարելու համար մենեջմենտը պահանջում է մի շարք ռիսկ-գործոնների հաղթահարում, որոնք գալիս են աշակերտից, ծնողից, համայնքից և ընդհանրապես հասարակությունից:

Հասարակական գիտությունների երկրագույն ուսուցման գործընթացի մեջ ընդգրկելը շատ հոռետեսների, կարծես, տրամաբանական դժգոհություն է հարուցում: Որպես փաստարկ բերում են այն, որ այս առարկաների ուսուցումը պահանջում է բավականին մեծ ծավալի բառապաշարի իմացություն: Թեպետ, պետք է նշել նաև այն, որ ճշգրիտ և բնագիտական առարկաների երկու լեզուներով ուսուցման ժամանակ կազմված դարձվածքային կլիշեները պակաս հնարավորություն են տալիս դասարանական միջավայրում իրականացնել մի շարք ակտիվություններ, ստեղծել գործնական միջավայր, իրականացնել աշակերտի իմացական կարողությունների վրա հաշվարկված սիմուլյացիոն և ինտերակտիվ գործողություններ և պահպանել մեր աշակերտների ազգային ինքնությունը:

Վրաստանի պետականության կազմավորման բազմադարյա ճանապարհի վրա աշխարհաքաղաքական բնութագրիչների և սահմանամերձ գոտիների առատության պատճառով

Վրաստանում ձևավորվել է բազմամշակույթ հասարակություն, որի շահերը փոխվում էին հասարակարգերի փոփոխման հետ:

Նրանից հետո, երբ Խորհրդային Միությունը փլուզվեց, և Վրաստանը դարձավ անկախ պետություն, օրակարգում դրվեց Վրաստանում բնակվող տարբեր ազգային փոքրամասնությունների վրացական հասարակական տարածքին ինտեգրման հարցը: Այս հիմնախնդրի կարգավորումը, նախ՝ ոչ վրացալեզու հանրակրթական դպրոցների շագրենի մոթթու վերածվեցին: Դպրոցում եղած ժամերի քանակը բավական չէր աշակերտներին պետական լեզուն լիարժեք կերպով ուսուցանելու համար: Միջազգային կազմակերպությունների միջամտությամբ և Կրթության և գիտության նախարարության բարի կամքով 2004 թվականին մի քանի դպրոցներում ներդրվեց երկլեզու կրթության փորձը, որի նպատակը տարբեր առարկայական խմբերում առարկայի վրացերեն ուսուցմամբ ոչ վրացալեզու աշակերտներին վրաց լեզվի ավելի լավ տիրապետման հարցում օգնելն էր: Իրավասու մարմինների այս հարցի հանդեպ վերաբերմունքի հաճախակի փոփոխումը երկլեզու կրթության ակտիվությունը օրակարգում թողեց, սակայն ցանկալի արդյունք չկարողացավ բերել: Պատճառը ֆինանսների սակավության հետ մեկտեղ ռիսկ-գործոնների գոյությունն էր, որոնց վճռման

պատասխանատվությունից դպրոցի վարչությունը խուսափեց: Սրան հետևեց այն, որ փորձարկային 40 դպրոցներից երկլեզու կրթության փորձը պահպանեց միայն մի քանի դպրոց: Այսպիսի դպրոցներից մեկն էր Մառնեուլիի մունիցիպալիտետի Ջանդարի հանրային դպրոցը, որտեղ աշխատել էմ 5 տարի: Ելնելով սեփական փորձից՝ առաջարկում էմ պատմություն առարկայի պետական լեզվի հետ ինտեգրված ուսուցման մի քանի առանձնահատկություն:

Պատմական գիտությունների ուսուցումը դպրոցում աշակերտի մոտ ձևավորում է առանձնահատուկ և ընդհանուր ունակություններ և բարոյական արժեքներ:

Առանձնահատուկ կարողություններ.

- կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ,
  - պատմական մեկնաբանություն,
  - պատմա-աշխարհագրական միջոցների կիրառում,
  - բաշխում ժամանակի և տարածության մեջ,
  - դիրքորոշման մշակում, քննադատում և պաշտպանում,
- Ընդհանուր կարողություններ.
- հիմնախնդրի գիտակցում և կապերի որոշում,

• տեղեկությունների հայթայթում և կազմակերպում,

- ստեղծագործական կարողություն,
- հաղորդակցություն,
- հետազոտություն,
- հիմնախնդրի վճռում,
- մոդելավորում,
- ուսանման կարողություն,
- համագործակցություն,

Բարոյական արժեքներ.

• մարդու արժանապատվության և իրավունքների հարգանք,

- կարեկցանք և հոգատարություն,
- սեր հայրենիքի հանդեպ,
- սկզբունքայնություն և քաղաքացիական արիություն,

• բարեխղճություն և աշխատասիրություն,

- հավասարություն,
- հանդուրժողականություն,
- արդարացիություն և օրենքների հարգանք:

Ընդհանրապես, առարկայի և լեզվի ինտեգրված ուսուցման ժամանակ պետք է հիշենք, որ.

1.Նախ՝ պետք է սահմանել այս կամ այն թեմայում ներկայացված հասկացությունների, հանգուցային հարցերի ասպեկտները, ինչի է տիրապետում և ինչի պետք է տիրապետի աշակերտը դասի ընթացքում:

2.Դասի ընթացքում ուսումնասիրվելիք հարցերի կողքին ուսուցիչը պետք է կատարի լեզվական նյութի մատուցման հաշվեկշիռ:

3.Պետք է պլանավորվի, թե որ ակտիվությունը վարել պետական և որը մայրենի լեզվով:

4.Համապատասխանաբար պետք է ընտրվեն երկլեզու դիդակտիկ նյութեր, կամ այնպիսի վիզուալ նյութ, որը մեզ հնարավորություն կտա ակտիվացնել աշակերտի իմացական կարողությունները:

5. Առարկայի չափորոշիչ նախատեսմամբ սահմանվեն առարկայական և լեզվական նպատակները, ուսումնական ակտիվությունների տեսակները, երկլեզու նախագծերը և հաղորդակցական ակտիվությունները:

6.Լեզվի ուսուցման հաշվին չտուժի առարկան: Փորձենք առարկայի առավելագույն գիտելիք փոխանցել աշակերտին, իսկ պետական լեզվով համեմենք դասը:

Ուսուցիչը ճիշտ պետք է բաշխի դասը: Համամասնության կադապար գոյություն չունի, դա պետք է ցույց տա անհրաժեշտությունը, և դրա հնարավորություն մեզ պետք է տա լսարանը:

Եզրակացություն  
Վրաստանում ընթացող կրթական բարեփոխման կարևորագույն բաղադրամասերից մեկն անպայման կդառնա երկլեզու կրթության ներդրումը Վրաստանի կրթական տարածքում: Ազգային փոքրամասնությունների համայնացումը և նրանց լիարժեք ինտեգրումը վրացական պետական տարածք հաջող չի լինի առանց հաղորդակցության գոյության: Երկլեզու կրթությունը բազմամշակույթ հասարակությունում երեխային պատրաստելու հիմնական տարրերից մեկն է: Այնքանով, որքանով Վրաստանը միշտ բազմազգ երկիր է եղել, օր-օրի աճում է երկրորդ լեզվի, մեր դեպքում պետական լեզվի՝ վրացերենի, ուսուցման անհրաժեշտությունը: Պետական քաղաքականությունը կայանում է նրանում, որ ազգային փոքրամասնություններին ուսուցանի պետական լեզուն՝ նրանց մայրենի լեզվին, մշակույթին և ավանդույթներին գուզահեռ:

Փառնավազ՝ առաջին թագավորը  
Քարթլիում

Դասի նպատակը՝ (45 րոպե)  
Աշակերտների համար Քարթլիի առաջին թագավորի՝ Փառնավազի, գործունեության մասին տեղեկությունների մատուցում, տվյալ պատմական ժամանակամիջոցի ժամանակագրական

շրջանակների սահմանում, քարտեզի վրա կողմնորոշում:

Արդյունքները և ստուգիչները

1. Աշակերտը հասկանում է թվականության համակարգը: Կապակցում է պատմական իրադարձությունները և փաստերը համապատասխան պատմական դարաշրջանի հետ.

ա. Ժամանակային գծի վրա նշում է Փառնավազի թագավորության ժամանակագրական շրջանը:

բ. Սահմանում է Փառնավազի թագավորության տևողությունը:

2. Աշակերտը կատարում է պատմա-աշխարհագրական միջոցների մեկնաբանություն.

ա. Քարտեզի վրա գտնում է Երիսթավությունները:

բ. Ուրվագծային քարտեզի վրա տեղադրում է սպասպետության (Շիդա Քարթլիի) սահմանները:

Մեթոդը.

ա. Տեքստի մատուցում

բ. Աղբյուրի օգտագործում անհատի և պատմական դարաշրջանի բնութագրման համար:

գ. Խմբային աշխատանք:

դ. Շնորհանդես դասարանի առջև:

Ռեսուրս. գրատախտակ, կավիճ, քարտեզ, ուրվագծային քարտեզ, գունավոր մատիտներ, տեքստի քսերոպատճեններ:

Ակտիվություն №1

Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և բաժանում նախօրոք պատրաստած տեքստ: Նա աշակերտներին ասում է, որ իրենց խնդիրն է տվյալ տեքստում գտնել Քարթլիի առաջին թագավոր Փառնավազի մասին տեղեկություններ: Բոլոր խմբերից ընտրված որևէ անդամ ներկայացնում է նյութը, և տեղի է ունենում թերության լրացում այլ խմբերի կողմից:

Ակտիվություն №2

Ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին նախօրոք բաժանված ժամանակային գծի վրա նշել Փառնավազի թագավորության ժամանակագրական շրջանակները:

Տեքստ.

Մ.թ.ա IV-III դարերում Արևելյան Վրաստանի տարածքում ձևավորվեց Քարթլիի թագավորությունը: Նրա թագավորն էր Փառնավազը, որը Արևմտյան Վրաստանի կառավարիչ Քուջիի հետ պարտության մատնեց գավթիչ Ագոյին: Քարթլիի թագավորությունը բաժանված էր ութ էրիսթավության՝ Արգվեթի, Կախեթի, Ծունդա, Սամշվիլդե, Խունանի, Օձրիսե, Կլարջեթի և Էգրիսի, և մեկ սպասապետության՝ Շիդա Քարթլիի: Մայրաքաղաքը Մցխեթան էր, գլխավոր

բերդը՝ Արմազիի բերդը: Փառնավազը ստեղծեց վրացական զիր:

Աղբյուրներ.

...Միայն մեկին նշանակեց սպասապետ և հանձնեց Տփիլիսիից և Արագվիից մինչև Տասիսկարի և Փարվանա, այդ երկրամասը կոչվում է Շիդա Քարթլի: Եվ այս սպասապետը երկրորդ մարդն էր թագավորից հետո և բոլոր էրիսթավների ղեկավարն էր:

...Քսնայոթ տարեկան թագադրվեց և վաթսունհինգ տարի թագավորում էր իր կամքով .. և իր բոլոր օրերը, որ թագավորել է, իսադադությամբ է անցկացրել, կառուցել է և լցրել Քարթլին: Գարնան և աշնան օրերն անց էր կացնում Մցխեթայում՝ թագավորանիստ քաղաքում, ձմեռվա ամիսներին Գաշխանիում էր լինում, իսկ ամառվա ամիսներին՝ Ծունդայում: Ժամանակ առ ժամանակ այցելում էր Էգրիսի և Կլարջեթի, մեգրելների և կլարջերի որպիսությունը հարցնում և կարգավորում բոլորի գործերը:

Առաջադրանք.

Աշակերտների խմբերին առաջադրանք է տրվում՝ ներկայացնել Փառնավազի, որպես քաղաքական գործչի, դիմանկարը: Այս աշխատանքի կատարումից հետո յուրաքանչյուր խմբից մեկ զեկուցող ներկայացնում է շնորհանդես տվյալ թեմայի մասին:

Գնահատում. (10 միավորանոց համակարգ)

1. Խմբային աշխատանքի գնահատում (խմբային աշխատանքի կարողություն, խմբի անդամների հետ համագործակցություն, մասնակցություն որոշման կայացմանը 0-1-2 միավոր):

2. Անհատական աշխատանքի գնահատում (ուսուցիչը գնահատում է յուրաքանչյուր ճիշտ տրված պատասխանը 0-1-2 միավոր):

3. Շնորհանդես (ուսուցիչը գնահատում է աշակերտի ինքնուրույն մտածողության, մտքի հաղորդման և ճիշտ դատողության կարողությունը 0-1-2 միավոր):

4. Քարտեզի վրա կողմնորոշման կարողությունը 0-1-2 միավոր:

5. Ուրվագծային քարտեզով աշխատելու կարողությունը 0-1-2 միավոր:

Բառապաշարային բանկ.

2. Վրաստանի պատմա-աշխարհագրական բաժանումը (2 դաս)

Դասի նպատակը. (90 րոպե)

1. Վրաստանի պատմա-աշխարհագրական ծանոթացում:

2. Բնակչության հագուստի, բնակելի տան և ավանդույթների ուսումնասիրում՝ ըստ պատմա-աշխարհագրական շրջանների:

Արդյունքները և ստուգիչները.

1. Աշակերտը կարող է սահմանել պատմա-աշխարհագրական շրջանի հասկացությունը:

2. Աշակերտը տարբերակում է հագուստը, բնակելի և տնտեսական շինություններն՝ ըստ պատմա-աշխարհագրական շրջանների:

3. Աշխատանք ուրվագծային քարտեզի վրա և քարտեզի վրա պատմա-աշխարհագրական շրջանների սահմանում:

Մեթոդը.

ա. Տեքստի և այլ նյութերի մատուցում:

բ. Խմբային աշխատանք:

գ. Դասարանի առջև ներկայացում:

դ. Ինքնուրույն աշխատանքի կարողությունների և հմտությունների մշակում:

Ռեսուրս. քարտեզ, տեքստ, ազգագրական նկարներ (հագուստ, բնակելի և տնտեսական շինությունների

նկարներ) ըստ Վրաստանի պատմա-աշխարհագրական տարածաշրջանների: Անհրաժեշտ նյութեր. սուսինձ, մկրատ:

Ակտիվություն №1 Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և աշակերտներին բաժանում տեքստ, քարտեզ և հանձնարարում սահմանել Վրաստանի պատմա-աշխարհագրական տարածաշրջանները:

Ակտիվություն №2 Ուսուցիչն աշակերտներին բաժանում է քարտեզ, ազգագրական նկարներ (հագուստ և բնակելի թե տնտեսական շինությունների նկարներ) և հանձնարարում է կտրած-հանած նկարները սոսնձել ըստ պատմա-աշխարհագրական տարածաշրջանների (օրինակ՝ աջարական տարազովինը փակցնի Աջարիայի տեղում, օդա-տունը Արևմտյան Վրաստանի և դարբազին՝ Արևելյան Վրաստանի տեղում և այլն):

Ակտիվություն №3 Ուսուցիչը խմբերին բաժանում է ուրվագծային քարտեզներ: Մի խմբին բաժանում է շենք-շինությունների նկարներ (օդա, դարբազի, հարդանոց, խորդանոց ... ), այնուհետև խմբին՝ տարազների նկարներ, իսկ երրորդ խմբին միայն պատմա-աշխարհագրական շրջանների անվանումներ: Աշակերտները խմբերում պետք է կարողանան տվյալ նյութը փակցնել ուրվագծային քարտեզի վրա և ընդհանուր առմամբ դասարանի կողմից ներկայացնել մեկական օրինակ:

Տեքստ. Վրաստանն առաջացել է երկու հնագույն պետական միավորումների՝ Կոլխեթիի և Իբերիայի միավորմամբ: Դարերի ընթացքում ձևավորվել են Վրաստանի պատմա-աշխարհագրական տարածաշրջանները, ինչին նպաստել է Վրաստանի աշխարհագրական դիրքը և ռելիեֆը: Ծայրահեղ արևմուտքում գտնվում է Աբխազիան, նրան հաջորդում են Սվանեթին, Ռաճան և Լեչխումին: Սև ծովի արևելյան ափը զբաղեցնում են Գուրիան և Աջարիան: Աջարիայից հարավ գտնվում էին պատմական գավառներ Լազեթին, Կլարջեթին, Կոլան, Արտաանին, Տաոն, Շավշեթին (այս տարածքները ներկայումս Թուրքիայի կազմի մեջ են): Վրաստանի կենտրոնական մասը զբաղեցնում է Քարթլին, նրանից արևմուտք գտնվում են Իմերեթին, իսկ հարավ-արևմուտք՝ Սամցխե-Ջավախեթին: Քարթլիից արևելք գտնվում են Կախեթին և Հերեթին (նրա մի մասը՝ Սաինգիլոն, ներկայումս Ադրբեջանի տարածքում է), իսկ Կախեթիի լեռնային մասը զբաղեցնում է Թուշ-Փշավ-Խևսուրեթին: Յուրաքանչյուր այս շրջանում ձևավորվել է հագուստի, բնակելի և տնտեսական շինությունների յուրահատուկ ոճ, ինչը պայմանավորված էր այն պատմական գործընթացներով և

աշխարհագրական դիրքով, որում տեղի է ունեցել տվյալ շրջանների սահմանների ձևավորումը: Դրանց ամբողջականությունը ընդհանուր վրացական պատմա-ազգագրական տեսակներն են:

Առաջադրանք. աշակերտների խմբերին առաջադրանք է տրվում, այդ աշխատանքը կատարելուց հետո յուրաքանչյուր խմբից մեկ զեկուցող ներկայացնի շնորհանդես թեմայի վերաբերյալ:

Գնահատում (10 միավորանոց համակարգ)

1. Խմբային աշխատանքի գնահատում (խմբային աշխատանքի կարողություն, խմբի անդամների հետ համագործակցություն, որոշումների կայացմանը մասնակցություն 0-1-2 միավոր):

2. Անհատական աշխատանքի գնահատում (ուսուցիչը գնահատում է յուրաքանչյուր ճիշտ տրված պատասխանը 0-1-2 միավոր):

3. Շնորհանդես (ուսուցիչը գնահատում է աշակերտի ինքնուրույն մտածողության, մտքի հաղորդման և ճիշտ դատողության կարողությունը 0-1-2 միավոր):

4. Քարտեզի վրա կողմնորոշման կարողությունը 0-1-2 միավոր:

5. Ուրվագծային քարտեզով աշխատելու կարողությունը 0-1-2 միավոր:



### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Երկլեզու կրթություն, Ուսուցչի ուղեցույց, խմբագիրներ՝ Շ.Տաբատաձե և Բ.Գոչիտաշվիլի, 2001

2. Ամսագիր «Երկլեզու կրթություն», №4, 2010

3. Ազգային փոքրամասնությունների ինտեգրում բազմալեզու կրթության միջոցով, Քաղաքականության փաստաթուղթ, 2009

4. Լ. Ախվլեդիանի, Մ. Ինասարիձե, Ն. Շարաշենիձե, Կ. Գաբունիա, Լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցում հանրակրթական դպրոցների հիմնական և միջնակարգ աստիճաններում, Պատմություն, Թբ., 2010

5. Մ. Ինասարիձե, Ն. Շարաշենիձե, Գ. Գախելաձե, Լեզվի և առարկայի ինտեգրված ուսուցում տարրական դպրոցում, Թբ., 2010

6. Ս. Ջանաշիա, Ն. Իմեդաձե, Ս. Գոգոձե, Զարգացման և ուսանման տեսություններ, Օժանդակ ձեռնարկ, 2008

**David Chochishvili**

*Doctor of Historical Sciences*

*Professor of Gori State Teaching University*

*Trainer of bilingual education*

## **Some Issues of History Teaching at Bilingual Schools**

### **ABSTRACT**

Bilingual education is an approved method in many countries of the modern society and it is used effectively. Bilingual education takes place from 2004 in Georgia, when one of the international organizations called “Simera” started implementations of bilingual education programs in four non Georgian schools of different regions.

In our reality bilingual education requires much more responsibility from school administration than it is in monolingual schools. This happens because the management of bilingual schools involves a whole risk-factors related to pupils, parents and society in general.

At the beginning when teaching of social sciences in state language at bilingual schools had a many skeptics. They state that the teaching social subjects requires a great storage of lexical. But phraseological clichés in the process of the exact and natural sciences teaching gives less opportunity to carry out the various simulations and interactive activities in class room. But it is extremely important to be focused on pupils’ cognitive skills, create peaceful work atmosphere and support to preserve national identity of each students.